

«Լարք»-ի Հերթական Սխրանքը¹ ՀԷՆՂԷԼ ՄԵՍԻԱ

Երգչախումբի եւ նուագախմբի միացեալ կատարմամբ
Խմբավար՝ Վաչէ Պարսումեան

Գրեց՝ Սարգիս Եափունեան

«Փառք ի բարձունս Աստուծոյ,
եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»
Հովնաթի Անտարսան

Իր որակեալ համերգներով զաղոյթիս մէջ լուրջ հեղինակութիւն վայելող «Լարք»-ը, քաջալերուած Պախի Տիրոջ չարչարանքները եւ Պէթրովէնի Ինքնորոշ Սիմֆոնիա-յի կատարումների գտած ամենաջերմ ընդունելութիւնից, կատարեց իր հերթական սխրանքը՝ երաժշտասէր լայն հասարակութեան դատից ներկայացրեց ՀԷՆՂԷԼԻ ՄԵՍԻԱ հանճարեղ օրաթորիայի իր կատարումը։

Խմբավար եւ համաշխարհային դասական երաժշտութեան քաջ գիտակ Վաչէ Պարսումեանի կազմած նպատակային, ճաշակաւոր տեղեկատու-ծրագրից՝ ունկնդիրն իմանում է, որ Մեսիա-ն կամ Օծեալ Տէր-ը Յիսուս Փրկչին նուիրուած եռամսան, մեծակտաւ օրհներգ է համաշխարհային դասական երաժշտութեան ունիւթորարի ամենասիրուած եւ մնայուն գործերից մէկը։ Վկայերգային ժանրի, քնարական բնույթի երկ, որ, սակայն տեղ-տեղ ստանում է դրամաթիկական խորը երանգաւորում։ Մեսիա-ի լիարեթթօն կազմել է Չաուլզ Ջէնէնգը՝ Սաղմունքից, Մարգարէութիւններից, Առաքելական թղթերից եւ Յովհաննոս Յայտնութիւնից քաղուած համապատասխան ճիւղերի հիմքի վրայ։

Մեսիա-ի՝ բուն թեման Փրկչի կեանքի այն հատուածն է, որ չարչարանքներից, խաչելութիւնից, մահ ու գերեզմանից գնում-յանգում է հրաշափառ յարութեան, յաւիտեական կեանքի համընդհանուր երջանկութեան, միջնէն ցնծաձայն ալելուիա՝... Ու լինում է այնպէս, որ փրկչի յարութեան խորհրդով զօրացած մարդիկ իրենց մէջ ոյժ են գտնում գոչելու համար մեծագոյն ինքնավստահութեամբ. «Ը՛ր է, մա՛հ, քու խայթոյդ, ո՛ր է, գերեզման, քու յաղթանակը» եւ աւելացնելու. «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՛վ կրնայ մեզ հակառակ ըլլալ»։

Ահա՛ հաստատ համոզումն ու հաւատքը, որին յանգել էր ինքնաստուգումի մէջ լուծ-քարացած ունկնդիրների հոծ զանգուածը։

Ու երբ նուագախումբն ու երգչախումբը Վաչէ Պարսումեանի տիրական ղեկավարութեամբ եւ միացեալ ներդաշն հզօրութեամբ հնչեցրին ցնծագին, յաղթական մեծ «Ալելուիա»-ն, ինձ թուաց, թէ աստուածային կամքի մեծաձայն շնփորումով սկսուել է, իր մեղքերի ծանրութեան տակ կործանած հին աշխարհի ու մարդկութեան վերածննդեան ու վերջապետի երջանիկ ետուզեղը... Այս ոգևորութեան մէջ, ի տես չորս բոլորս պատանձ հմայուած, ոգեղինացած, վերացած մարդկանց, եւ համոզուեցի, որ իրօք անգործ է մահուան խայթոցը, իսկ «գերեզմանի կարծեցեալ յաղթանակը» լոկ մի անփառունակ պարտութիւն։ Այդ պահին պարզորոշ երևում էր, թէ երկինք ու երկիր, երկնաւոր ու երկրաւոր, Աստուած եւ մարդ ինչքա՛ն մօտ ու մտերիմ են իրար, թէ խաղաղութիւն է երկնի տակ, երկրի վրայ, եւ բարեհաճութիւն ու սէր մարդոց միջեւ։

Արդարեւ համերգի վերջում ելնելով սրահի ընդհանուր տրամադրութիւնից, կարելի էր համոզուած պնդել, թէ այդ պահին, սրահում հաւաքուած մարդոց հոգիներում չկար, կամ առժամանակ լռել-մնջուել էր ամէն տեսակ չար զգացում՝ նախանձ, ատելութիւն ու թշնամանք, քանզի այնտեղ եւ այդ պահին բնակութիւն էին հաստատել խաղաղութիւնը, բարեհաճութիւնը, ինքնագոհարարման փրկչական ոգին եւ աստուածային սէրը։

Այս համերգին երգչախումբ, նուագախումբ ու խմբավար, մօտ 120 արուեստագէտ անհատականութիւններ, իրարզգացողութեան, իրար հետ մէկ, զօրաւոր եւ կատարելապէս ներդաշնակ լինելու փայլուն օրինակը տուին եւ ուղիղ երկու եւ կէս ժամ ունկնդիրներին պահեցին-ապրեցուցին հոգեւոր ներշնչանքի վերին ոլորտներում, որ

¹ Համերգը Ամերիկայի Հայ Անտարանական Ընկերակցութեան հովանաւորութեամբ, տեղի ունեցաւ Ծաբաթ օրը, 28 Մարտ, First Congregational Church of Pasadena եկեղեցում։

² Ընտիր թղթի վրայ, գեղեցիկ տպագրութեամբ, ճաշակաւոր ձեւաւորումով ծրագիր-տեղեկատու, որ ունկնդիրը կը գտնի հայերէն եւ անգլերէն լեզուներով տեղեկութիւններ ու գիտելիքներ «Լարք» երաժշտական Ընկերակցութեան գործունէութեան, ծրագրերի եւ մարդկանց մասին, ինչպէս նաեւ ՀԷՆՂԷԼԻ կնեսագրութեան եւ Մեսիա օրաթորիայի մասին։ Վստահելի եւ օգտակար ծրագիր-տեղեկատու-ուղեցոյց, որի համար, անշուշտ, շնորհակալ են ունկնդիրները։

³ Մեսիա-ի տեքստը կամ լիարեթթօն, 47 վերտառութիւնների անընդմէջ յաջորդականութեամբ, հայերէն եւ անգլերէն ցուցադրուեց լուստատիտակի վրայ եւ մեծապէս օգնեց կատարողը երաժշտական ստեղծագործութեան անելի հեշտ ու լաւ ընկալմանը։ Հնարանք որ արժէ ընդօրինակել։

խաղաղություն էր, բարեհաճություն, աստուածային սեր, հեճուելեան հանճարի լոյս, որոնցով ողողուած՝ մաքրուցին, մխիթարուեցին ցաւած մեր հոգիները:

Ահա, այս եմ համարում ես «Լարք»-եան սոյն համերգների նպատակն ու ծառայությունը օրերի հոգս ու տաղտուկներից յոգնած-բեզարած Լուս-Անջելլոսահայ գաղութի երաժշտասերներին, որոնք յոտնկայս եւ երկար ժամանակ չլող ծափերով ու կեցցէներով վարձահատոյց եղան ստացած բացառիկ վայելքի համար: Պարտիմ խոստովանել, որ ընդհանուր այս յաջողութեան մէջ զգալի էր երգչախմբի եւ նուագախմբի մէջ տասնեակից աւելի շնորհալի մենակատարների ներդրումը: Արհեստավարժ շնորհալիների տասնեակի մէջ հանդըով եմ յիշում-ընդգծում տասնմէկամեայ խոստովանալի պատանի Մհեր Վարդումեանի ներկայությունը:

Մենա օրհներգութեան նկատմամբ ունկնդիրների ցոյց տուած բացառիկ ջերմ ընդունելությունը օրհնաչափ ու հասկանալի էր, քանի որ այն հայերիս համար հոգեմօտ ստեղծագործություն է իր բուն բովանդակութեամբ, որ ընթացք է չարչարաններից, խաչելությունից, մահից ու գերեզմանից դէպի յաղթական յարություն, դէպի յախտենական կեանք ու երջանկություն, դէպի համընդհանուր ցնծածայն «այլութիւն»:

Նոյն այս ընթացքի հարազատ նմանակը չէ՝ արդեօք հայոցս չարչարանաց, նահատակությունների ու վերջաւորմանների դար ու դարեր՝ կրկնող պատմությունը, որը այնքան վեհօրէն է մարմնաւորել մեծն Խոյրասար իր հանճարեղ «Պատարագ-ում» Հայոց Սրբազան «Մեսսաս»-յում:

Խորապէս յարգալից եւ անկեղծօրէն ջերմ այդ ընդունելութեան միւս կարեւոր գաղտնիքը պէտք է փնտել երգչախմբի եւ նուագախմբի գրագէտ, զգայուն ու ներշնչեալ կատարումին մէջ, որին Վաչէ Պարսումեանը հասել է բանիմաց, անճանճի մշակում-յոլումներով, արուեստագէտի խստագոյն պահանջօրոյթներով:

Վաչէ Պարսումեանը լայնախոհ հայ արուեստագէտ է. Երան խորք եւ ինչպէս ազգային սահմանափակումներին, այնպէս էլ ազգային արժէքների անտեսումը կամ ստորադասումը: Նա այսպէս է ձեւակերպել իր երաժշտական գործունէութեան նպատակը. «Պաշտպանել եւ տարածել բարձրարուեստ երաժշտական ստեղծագործությունները, յատկապէս ընդգծելով հայ ազգային երաժշտութեան առաջնությունը»: Երկար տարիների խմբավարական իր գործունէութեան եւ ռեբերթուարային քաղաքականութեան մէջ Վ. Պարսումեանը խստօրէն հաւատալիմ է մնացել իր նպատակին: Նրա համերգային ծրագրերը, որպէս կանոն, փոխէ ի փոխ կազմուած են եղել հայ եւ համաշխարհային դասական երաժշտութեան ընտիր էջերից:

Նկատի ունենալով վերոյիշեալը, ես ինձ գօտեպնդում եմ այն յոյսով, որ 1999 երաժշտական տարուան բացումը «Լարք»-ը կը նշանաւորի Խոյրասարի կրթութեան կրթողային ու վեհաշունչ «Պատարագ»-ի արժանի կատարումով, որը, անսարսափ, գաղութիս երաժշտասէր հասարակութեան համար կը լինի հայ արուեստի սոցական մեծ կոչուրք եւ հոգեկան անմոռանալի վայելք:

Ընթացիկ տարուայ գալիք ինը ամիսների համար «Լարք»-ը ծրագրել է եւս չորս հետաքրքիր, ուսանելի համերգ՝ Մոցարտ՝ Հանդիսաւոր «Պատարագ, սո միւրո, Ռուբէն Ալթուեն» Հայ ժողովրդական երգեր, մանկական երկու օպերան եւ Ա. Յարությունեան՝ Սիմֆոնիկ երաժշտություն:

Զորս համերգ, նշանակում է եւս ինը ամիսների լարում, անհանգիստ տքնացք, որոնումներ, փորձեր, անվերջ փորձեր եւ ասպա՝ համերգներ, նորից ծափ ու ծաղիկներ, յուզումներ եւ... աչքերի մէջ արցունք դարած երջանկություն... Այսպէս՝ նորից, վերստին ու միշտ: Ահա, սա՛ է հայ մշակոյթի տոհմատուն «Լարք»-ի եւ լարքականների աւօրեան եւ կեանքը:

Լարքական, այսինքն՝ «Լարք»-ի ընտանիքին պատկանող: Եւ սիրում եւ յանախ օգտագործում եմ այս արտայայտությունը, քանի որ, իրօք, «Լարք»-ը բազմաճառ մի մեծ ընտանիք է, ուր սերտ մտերմութեամբ ապրում: Սովորում եւ ստեղծագործում են Իրանում, Լիբանանում, Հայաստանում, Սիրիայում, Ֆրանսիայում եւ այլուր ծնուած, մեծացած, կրթուած հայեր եւ Երա նպատակի քուրայում միաձուլուած, ներդաշնակուած եւ հայրենանուր կենդանի գործի են վերածուած Երանց տարբեր ունակություններն ու շնորհները, տարբեր գաղափարներն ու ճաշակները: Եւ այսպէս, նպատակի եւ ճաշակի ընդհանրութեամբ, Երանք դառնում են լարքականներ:

Զգրում օրէնք է, ում շատ է տրուած, Երանից շատ էլ պիտի պահանջուի: Իսկ լարքականներին շատ է տրուած: Ռեկնմ, միշտ ու շատ պահանջելով, միշտ ու շատ էլ պիտի յիշենք Երան: Կարծում եմ հակառակ վերաբերմունքը երջանկություն չէր բերի Երանց. քանզի յայտնի է, արուեստագէտի երջանկությունը այն ծաղիկն է, որ սեփական տառապանքից է սնուում...:

Լարքականներին եւ խմբավար Վաչէ Պարսումեանին մաղթում ենք ստեղծագործական նորանոր «տառապանքներ» յուրախություն բոլորիս եւ ի բարգաւաճումն հայ երաժշտական մշակոյթի: